

# ՎՐԱՍՏԱՆ

«ՅՐԱՆՇԱՆՈ» (ՆԱՅԱՐԱՌՑՈՒՄ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅԱ Ե ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 77 - 78 (17084) ՇԱՐԱԾ 1 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵՐԻ

## ԳՈՐԾԱԴԻՐ

### ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՄԵՐ ՁԵՌՆԱՐԿԱԾ ՔԱՅԼԵՐԸ ՀԱՆՔԵՅՆՈՒՄ ԵՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԱՇԽՈՒԺԱՅՄԱՆԸ»

ԲՈԼՈՐ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԸ, ՀԱՆՐԱՅԻՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ, ՈՍՏԻԿԱՆՆԵՐԻ, ԶԻՆՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԱՇԽԱՏՎԱՐՁԵՐԸ ԱՎԵԼԱՑՎՈՒՄ ԵՆ

Սեպտեմբերի 30-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու նախագահությամբ անցկացվեց երկրի կառավարության հերթական նիստը:

Վարչապետը ներկայացրեց հաջորդ տարվա պետական բյուջեի ծրագրման մանրամասները:

- Կուզեի իրագրել մեր բնակչությանը հաջորդ տարվա բյուջեի վերաբերյալ: Եվ սակայն, մինչ այդ հակիրճ գնահատական տամ եւ հիշեցնեմ հանրությանն ու կառավարության անդամներին, թե ինչպիսին էր մեկնակետը երկու տարի առաջ:

Ինչպես գիտեք, Վրաստանի տնտեսության վրա մեծ ազդեցություն գործեց համաճարակը, տնտեսությունը կրճատվեց 6,8 տոկոսով, ինչը հանգեցրեց տնտեսական անկման, մեր եկամուտների նվազման, աղքատացման, գործազրկության աճի եւ այլն: Միաժամանակ (Շարունակությունը՝ 2-րդ էջում)



Սեպտեմբերի 30-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու նախագահությամբ անցկացվեց երկրի կառավարության հերթական նիստը:

## 29 ՏԱՐԻ՝ ՍՈՒՏՈՒՄԻ ԱՆԿՈՒՄԻՑ ՀՏՈՒ

### ԱՊԱԳԱՆ ՊԱՏԿԱՆՈՒՄ Ե ԱԲԽԱԶՆԵՐԻ ԵՎ ՎՐԱՑԻՆԵՐԻ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆԸ

ԲԱՅՎԵՅ 29 ՏԱՐԻ ԱՈԱԶ ՍՈՒՏՈՒՄԻՈՒՄ ԳԵՂԱԿԱՀԱՆՐԱՑՎԱԾ ՎՐԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՇԵՐՈՍ ԺՈՒԼԻ ԸՄՐՏԱՎԱՅԻ ԿԻՍԱՆԳՐԻՆ



Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, խորհրդարանի նախագահի, Թբիլիսիի քաղաքապետի եւ կառավարության անդամների հետ, Սուխումիի անկման օրը այցելեց Վրաստանի միասնության համար մղվող պայքարում զոհված հերոսների հուշահամալիր՝ ծաղկեպսակ դրեց, եւ հարգանքի տուրք մատուցեց զոհվածների հիշատակին:

Սեպտեմբերի 27-ին Վրաստանի վարչապետը, խորհրդարանի նախագահ Շալվա Պապուաշվիլու

Սեպտեմբերի 27-ին լրացավ Սուխումիի անկման 29 տարին: Քաղաքական շրջանակների ներկայացուցիչները, արխագական պատերազմում զոհվածների հարազատները եւ շարքային քաղաքացիները հավաքվեցին հերոսների հուշահամալիրում եւ հարգանքի տուրք մատուցեցին զոհվածների հիշատակին:

Եւ Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեի հետ, բացեց Վրաստանի ազգային հերոս ժողովի Շարտավայի կիսանդրին՝ Հերոսների հուշահամալիրի տարածքում:

Ի պատիվ Աբխազիայի պատերազմում զոհվածների հիշատակի, Վրաստանի պետական դրոշմները խոնարհվել են կառավարության, խորհրդարանի եւ այլ վարչական շենքերի վրա:

Աբխազիայում պատերազմը սկսվել է 1992 թվականի օգոստոսի 14-ին եւ տևել՝ 13 ամիս 13 օր: Տարբեր տվյալներով, զինված հակամարտությունների ընթացքում զոհվել է 10-30 հազար մարդ, ավելի քան 300 հազարը՝ տեղահանվել:

Սուխումիի անկումից 15 տարի անց՝ 2008 թվականի օգոստոսի 26-ին, Ռուսաստանը Աբխազիան ճանաչեց որպես «անկախ հանրապետություն»:

## COVID - 19

### ՎԱՐԱԿՎԱԾԻ ՀՏՏ ՇՓՄԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ ՄԵԿՈՒՍԱՑՈՒՄԸ ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ՎԵՐԱՑՎՈՒՄ Ե



Սեպտեմբերի 28-ին Վրաստանի կառավարությունը ընդունեց որոշում, ըստ որի՝ կովիդի հիվանդի հետ շփման պատճառով մեկուսացման պարտավորությունը ամբողջովին վերացվում է:

Որոշման համաձայն, բարձր ռիսկային շփումից 10 օրվա ընթացքում, այդ անձանց խստորեն խորհուրդ է տրվում կրել շնչադիմակ:

Հիշեցնենք, որ, գործող կանոնակարգի համաձայն, չպատվաստված կամ կիսով պատվաստված քաղաքացիները, կովիդվարակվածի հետ շփվելու դեպքում, պետք է անցնեն 8-օրյա մեկուսացում, որից հետո հաջորդ 9-12 օրը պետք է դիմակ կրեն:

Նշված կարգը կիրառվել է կովիդվարակվածների նկատմամբ, որոնք ընդգրկված են հետեւյալ կատեգորիայի մեջ՝ չպատվաստված կամ թերի (1 դոզայով) պատվաստման դեպքում: Այն անձանց դեպքում, ովքեր չեն ստացել խթանող դոզան եւ առաջնային պատվաստման 2-րդ չափաբաժինը ստանալուց հետո անցել է ավելի քան 90 օր:

## ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

### «ՎՐԱՍՏԱՆԸ ՊԱՏՐԱՍՏ Ե ԸՆԴՈՒՆԱԿԵԼ ՄԻջՆՈՐԴԻ ԴԵՐԸ ԵՎ ՆՊԱՍՏԵԼ ՏԱՐԱԾԱՆԵՐԸ ՆԱԳՐԱՊՈՒԹՅԱՆ ՈՒ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՏՄԱՆԸ»

ՆՅՈՒ ՅՈՐԹՈՒՄ ԿԱՅԱՑԱԿ ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼՈՒ ԵՎ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Սեպտեմբերի 24-ին, Նյու Յորքում ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 77-րդ նստաշրջանի շրջանակներում, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին հանդիպում ունեցավ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ:

Վրաստանի կառավարության հաղորդագրությամբ, Վրաստանի եւ Հայաստանի վարչապետները քննարկել են երկու երկրների միջեւ համագործակցության օրակարգի հիմնական հարցերը: Նշվել է, որ երկու երկրների միջեւ հարաբերությունները դինամիկ են զարգանում, ինչը



Սեպտեմբերի 24-ին, Նյու Յորքում ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 77-րդ նստաշրջանի շրջանակներում, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին հանդիպում ունեցավ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ:

## ՍՈՑԻԱԿԱԿԱՆ

### ԱԸՇԱ ԽՈՒՑԻՇՎԻԼԻ. «ԳՆԱՃԻ ՀԵՏԱԳԱ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԴԺՎԱՐ Ե ԿԱՆԽԱՏԵՍԵԼ»

Սեպտեմբերի 26-ին, կառավարության նիստի ավարտին Վրաստանի ֆինանսների նախարար Լաշա Խուցիշվիլին, անդրադարձավ երկրի բնակչությանը հատկապես մտահոգող գնաճի թեմային եւ հայտարարեց, որ 2023 թվականի երկրորդ կիսամյակում, Վրաստանում գնաճը նվազելու է մինչեւ 3 տոկոս, նշեց նաեւ, որ իրավիճակն անկայուն է, այդ իսկ պատճառով դժվար է հստակ ասել, թե ապագայում գնաճը ինչպիսի պատկեր կունենա:



- Չնայած գնաճը բավական բարձր է մնում, վերջին երկու ամիսներին սկսել է նվազել: Բնականաբար, դա պայմանավորված է ապրանքների միջազգային գներով: Սեմբ տեսնում ենք, որ FAO-ն, որը պարենային ապրանքների գների ինդեքսն է, վերջին 3 ամսվա ընթացքում, նվազման միտում ունի,- նշեց Լաշա Խուցիշվիլին եւ հավելեց, որ վերջին օրերին նվազում է նկատվել նավթի ու վառելիքի գինը շուկայում,

որը որոշ ժամանակ անց, կարտացոլվի նաեւ Վրաստանում:

- Կարծում ենք, որ ապրանքների էժանացման ցուցանիշը, որն այսօր առկա է, կշարունակվի: Սակայն բոլորս էլ շատ լավ տեսնում ենք, թե ինչ աշխարհաքաղաքական ռիսկեր կան տարածաշրջանում եւ շատ դժվար է կանխատեսել, թե ինչ տնտեսական հեռանկարներ են սպասվում,- ընդգծեց Լաշա Խուցիշվիլին:

## ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ

### ԱՇՈՏ ՍՄԲԱՏՅԱՆԻ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Սեպտեմբերի 27-28-ին, Վրաստանում Հայաստանի նորանշանակ դեսպան Աշոտ Սմբատյանը ճանաչողական հանդիպումներ ունեցավ Վրաստանի ներքին գործերի նախարար Վախթանգ Գոմելաուրու եւ արտաքին գործերի նախարար Իլիա Դարչիաշվիլու հետ:

Հանդիպումներին անդրադարձ կատարվեց երկկողմ եւ բազմակողմ ձեռնապահերով Վրաստանի եւ Հայաստանի միջեւ համագործակցությանը, կարելի էր վրաց-հայկական հարաբերությունների բազմաոլորտ օրակարգի շարունակական ընդլայնումը:

Կողմերը մտքեր փոխանակեցին նաեւ տարածաշրջանում եւ աշխարհում տեղի ունեցող զարգացումների ու մարտահրավերների վերաբերյալ, այս համատեքստում ընդգծվեց երկու երկրների միջեւ բարձր մակարդակի ակտիվ քաղաքական երկխոսության պահպանման անհրաժեշտությունը:

Գոմելաուրու նաեւ տարածաշրջանում եւ աշխարհում տեղի ունեցող զարգացումների ու մարտահրավերների վերաբերյալ, այս համատեքստում ընդգծվեց երկու երկրների միջեւ բարձր մակարդակի ակտիվ քաղաքական երկխոսության պահպանման անհրաժեշտությունը:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԸ ՊԱՏՐԱՍ Է ՀԱՐՈՒՆԱԿԵԼ ՄԻՋՆՈՐՂԻ ՂԵՐԸ ԵՎ ՆՊԱՍՏԵԼ ՏԱՐԱԾԱՆՐՁԱՆՈՒՄ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՈՒ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

լավ հիմք է հետագա համագործակցության ընդլայնման համար:

Հանդիպմանը Իրակլի Ղարիբաշվիլին եւ Նիկոլ Փաշինյանը քննարկել են Հարավային Կովկասում տիրող իրավիճակը: Նիկոլ Փաշինյանն անդրադարձել է Հայաստանի

ճի սուվերեն տարածքի նկատմամբ Ադրբեյջանի կողմից ձեռնարկված ագրեսիայի հետեւանքով Հայաստանի տարածքների օկուպացիային եւ դրա հետեւանքով ստեղծված իրավիճակին:

Ընդգծվել է հակամարտությունների խաղաղ կարգավորման կարեւորությունը:

Իրակլի Ղարիբաշվիլին կարեւորել է տարածաշրջանում խաղաղության ու կայունության պահպանումը եւ պատրաստակամություն հայտնել շարունակել միջնորդի դերը եւ նպաստել տարածաշրջանում եւ նրա սահմաններից դուրս խաղաղության ու կայունության ապահովմանը:

«Լավ հանդիպում եմ ունեցել Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ: Մենք քննարկել ենք մեր երկրների հարաբերությունները, տարածաշրջանում եւ դրանից դուրս խաղաղության եւ կայունության կարեւորությունը: Հարավային Կովկասը պետք է դառնա հնարավորությունների տարածաշրջան», - իր կայքում գրանցել է Իրակլի Ղարիբաշվիլին:

ԳՈՐԾԱԴԻՐ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՄԵՐ ՁԵՈՆԱՐԿԱԾ ԶԱՅԼԵՐԸ ՀԱՆԳԵՅՆՈՒՄ ԵՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԱՇԽՈՒԺԱՑՄԱՆԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

մանակ, հիշում եք, որ այն ժամանակ կառավարությունը բավական մեծ պարտքեր վերցրեց, պետական պարտքը հասավ ՀՆԱ-ի ավելի քան 60 տոկոսի: Նախորդ տարվա առաջին եռամսյակում տնտեսական անկումը շարունակվեց, եւ իրական տնտեսությունը կրճատվեց 4,1 տոկոսով, թեւեւ մենք գիտենք, որ մեր ձեռնարկած շատ արդյունավետ, խելամիտ քայլերը շատ արագ հանգեցրին մեր երկրի էկոնոմիկայի աշխուժացմանն ու վերականգնմանը եւ արդեն անցած տարի ստացանք հզոր երկնիչ տնտեսական աճ: Հիշեցնենք, որ 2021 թվականին տնտեսության իրական աճը կազմեց 10,4 տոկոս, ինչը նշանակում է, որ մենք ոչ միայն կարողացանք ամբողջությամբ վերականգնել 2020 թվականին կրած վնասը, այլեւ 2019 թվականի համեմատ բարձրացնել տնտեսության մակարդակը 2,9 տոկոսով, - ասաց կառավարության ղեկավարը:

Վարչապետի խոսքով, ավելացած բյուջեն կառավարությանը հնարավորություն է ընձեռնում նշանակալիորեն ավելացնել սոցիալական ոլորտի ծախսերը: Ինչպես նշեց Իրակլի Ղարիբաշվիլին, հունվարից առողջապահական եւ սոցիալական ծրագրերի ֆինանսավորումը կավելանա 770 մլրդ լարիով, 70 տարեկան եւ բարձր թոշակառուների թոշակը բարձրլեռնային բնակավայրերում կկազմի 440 լարի, մյուս բոլոր վայրերում 365 լարի:

- Մինչեւ 70 տարեկանների կենսաթոշակը կդառնա գրեթե 300 լարի, իսկ բարձրլեռնային բնակավայրերում մինչեւ 70 տարեկաններինը՝ 355 լարի:

Նաեւ, բացի կենսաթոշակից, նախատեսել ենք հաշմանդամների սոցիալական նպաստի կտրուկ բարձրացում՝ 65 լարիով, կավելանա նաեւ այլ կատեգորիայի հաշմանդամների նպաստը: Ուզում եմ հիշեցնել, որ մենք արդեն գրեթե եռապատկել ենք երեխաների աջակցությունը: Նախկինում 50, այժմ 150 լարի է, եւ աճը դեռ կշարունակվի, - հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

Իրակլի Ղարիբաշվիլու խոսքով՝ հունվարից հանրային աշխատողների աշխատավածը կավելանա 10, իսկ ոստիկանների, զինվորների եւ անվտանգության ծառայության աշխատակիցների աշխատավարձերը կբարձրանան 20 տոկոսով:

Վարչապետը նշեց, որ պաշտպանության նախարարության, ներքին գործերի նախարարության եւ անվտանգության ծառայության ֆինանսավորումն ավելանում է ընդհանուր առմամբ 490 մլրդ լարիով: Բացի այդ, ոստիկանների եւ զինվորների սոցիալական պայմանների բարելավման համար նախատեսված է բնակարանների կառուցումը:

ՍԱՂԻԶ ԱՅՑ

ԲԵԼՈՐՈՒՄԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՅՑԸ ԱՐԽԱԶԻԱ ԲԱՅԱՆԱՅՑ ՍԱՂԱՆՔ Է ՎՐԱՍՏԱՆԻ ՂԵՄ

ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԽՍՏԻՎ ՂԱՏԱՊԱՐՏԵՑ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԼՈՒԿԱՇԵՆԿՈՅԻ ԱՅՑԸ ԱՐԽԱԶԻԱ

Սեպտեմբերի 28-ին, Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն այցելեց Վրաստանից չվերահսկվող Աբխազիա: Բիծվիմբայի ամառանոցում նա համդիպում ունեցավ Աբխազիայի դե-ֆակտո նախագահ Սուլան Բժանիայի հետ:

Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի այցը Վրաստանից չվերահսկվող Աբխազիա՝ բացասական գնահատեց վրացական քաղաքական կողմը: Թե՛ իշխանական, թե՛ ընդդիմադիր ուժերը, մեղմ ասած, դատապարտեցին Լուկաշենկոյի այցը՝ այդ քայլն անվանելով Վրաստանի օկուպացված տարածքների մասին օրենքի ոտնահարում:

Ղարիբաշվիլին խստորեն դատապարտեց Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի այցը:

«Այս քայլը խախտում է Վրաստանի օկուպացված տարածքների մասին օրենքը եւ հակասում է միջազգային իրավունքին, ինչպես նաեւ՝ մեր երկրների երկկողմ հարաբերություններին», - գրել է Իրակլի Ղարիբաշվիլին:

Բելառուսի նախագահի այցն ինքնաիշխան Աբխազիա դատապարտեց նաեւ Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլին:

Սա Վրաստանի բռնազավթված տարածքների մասին օրենքի, մեր երկկողմ հարաբերությունների եւ միջազգային իրավունքի սկզբունքների անընդունելի խախտում է, - հայտարարեց Սալոմե Ջուրաբիշվիլին:

Վրաստանում Բելառուսի դեսպան Անատոլի Լիսիին՝ ի նշան բողոքի, կանչել են Վրաստանի արտաքին գործերի նախարարություն:

Ալեքսանդր Լուկաշենկոյի այցը Աբխազիա խստորեն դատապարտեցին Եվրամիության երկրները եւ ԱՄՆ:

ՌՈՒՄ - ՈՒՎՐԱԻՆԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱՐՈՒԹՅՈՒՆ. 219-ՐԴ ՕՐ

ՎԼԱԴԻՄԻՐ ԶԵԼԵՆՍԿԻ. «ՄԵՆՔ ՀԱՐՉԱՎԿՈՒՄ ԵՆՔ ԵՎ ԱԶԱՏԱԳՐՈՒՄ ՄԵՐ ՀՊՂԵՐԸ»

Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին իր հերթական տեսաուղերձում հայտարարեց, որ ճակատային գծում իրավիճակը կարգավորվում է: Նրա խոսքով, Ուկրաինայի զինված ուժերը շարունակում են հարձակողական գործողությունները տարբեր ուղղություններով եւ ազատագրում են տարածքները:

Ինչպես նշեց Ուկրաինայի նախագահը, սեպտեմբերի 6-ին հարկովի մարզում սկսված հակահարձակումը շարունակվում է, եւ Ուկրաինայի զինված ուժերն արդեն ազատագրել են շուրջ 8500 քառակուսի մետր տարածք:

ԹԲԻԼԻՍԻՆ ՂԱՏԱՊԱՐՏԵՑ ՈՒՎՐԱԻՆԱՅԻ ԲՈՒՆԱԶԱՎԹՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ

Վրաստանի արտաքին գործերի նախարարությունը (ԱԳՆ) դատապարտում է Ուկրաինայի՝ Ռուսաստանի կողմից բռնազավթված շրջաններում անցկացված հանրաքվեն: Միաժամանակ, պաշտոնական Թբիլիսիսի ապօրինի է համարում Ուկրաինայի չորս մարզերի միացումը Ռուսաստանին:

Նշենք, որ, Ուկրաինայի չորս մարզերում, Մոսկվայից վերահսկվող դե-ֆակտո ընտրական հանձնաժողովները հայտարարեցին հնգօրյա հանրաքվեի վերջնական արդյունքները, որի համաձայն՝ Չապորոժյեում բնակչության՝ 93,11 տոկոսը, Լու-

գանսկում 98,42 տոկոսը, Դոնեցկում՝ 99,23 տոկոսը, Խերսոնում՝ 87,05 տոկոսը կողմ է արտահայտվել Ռուսաստանի կազմում ընդգրկվելուն:

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԲՈՒՆԱԿՑԵՑ ՈՒՎՐԱԻՆԱՅԻ ԴՈՆԵՑԿԻ, ԼՈՒԳԱՆՍԿԻ, ՋԱՊՊՐՈՒՅԵԻ ԵՎ ԽԵՐՍՈՆԻ ՄԱՐԶԵՐԸ

Սեպտեմբերի 30-ին կրեմլում Վլադիմիր Պուտինն ու անջատողական առաջնորդները «համաձայնագրեր» են ստորագրել Ուկրաինայի բռնազավթված տարածքները՝ Լուգանսկի, Դոնեցկի, Խերսոնի եւ Չապորոժյեի մարզերը Ռուսաստանին միացնելու վերաբերյալ: Նշենք, որ վերոնշյալ տարածքը կազմում է Ուկրաինայի ողջ տարածքի 15 տոկոսը:

- Ես ուզում եմ լսել Կիեւի իշխանությունները եւ Արեւմուտքում նրանց իրական տերերը: Թող այսուհետ հիշեն, որ Լուգանսկում, Դոնեցկում, Խերսոնում եւ Չապորոժյեում ապրող մարդիկ մեր քաղաքացիներն են դառնում ընդմիշտ: Կոչ ենք անում Կիեւի ռեժիմին՝ անհապաղ դադարեցնել կրակը, բոլոր ռազմական գործողությունները, պատերազմը, որը սկսել է դեռ 2014 թվականին եւ վերադարձնել բանակցությունների սեղանի շուրջ: Մենք պատրաստ ենք դրան եւ այդ մասին բազմիցս բարձրաձայնել ենք: Միաժամանակ կրկնում ենք, Դոնեցկում, Լուգանսկում, Չապորոժյեում, Խերսոնում մեր ժողովրդի ընտրությունը չենք քննարկելու: Ընտրությունը կատարվել է, եւ Ռուսաստանը նրանց չի դավաճանի, - հայտարարեց Վլադիմիր Պուտինը:

Էջը պատրաստեց ԱՐԵՎԻԿԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ



ՊԱՅԹՅՈՒՆ՝ «ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՅՈՒՔ» ԳԱԶԱՏԱՐՈՒՄ

Սեպտեմբերի 26-ին, Եվրոպա արտահանվող բուսական երկու գազատարներում, միաժամանակ միջադեպեր են տեղի ունեցել: Ըստ Դանիայի եւ Շվեդիայի իշխանությունների տվյալների՝ գազի երկու արտահոսք է հայտնաբերվել: Գերմանիան, Դանիան եւ Շվեդիան չեն բացառում նպատակային դիվերսիաները:

«Հյուսիսային հոսք» գազատարի դեմ դիվերսիաների հետ կապված ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հրատապ նիստը նախատեսված է սեպտեմբերի 30-ին:

ՌՈՒՍԱՍՏԱՆ ՀՐԱՉՈՒԹՅՈՒՆ՝ ԻԺԵՎՍԿԻ ԴՊՐՈՑՈՒՄ...

Սեպտեմբերի 26-ի առավոտյան հարձակում է տեղի ունեցել Իժեվսկի դպրոցում: Հրածրության հետեւանքով գողվել է 15, վիրավորվել՝ 24 մարդ: 12 տուժածի վիճակը ծանր է: Ձոռների թվում կա 11 երեխա:

Դպրոցի նախկին աշակերտը՝ 1988 թվականին ծնված տղամարդը, կրակ է բացել դպրոցում, ապա՝ ինքնասպան եղել:

Կրթության նախարար Սերգեյ Կրավցովի խոսքով՝ հարձակվողը հոգեբուժական հաշվառման մեջ է եղել:

...ԻՐԿՈՒՏԱԿԻ ՄԱՐԶԻ ԶԻՆԿՈՒՄԻՍԱՐԻԱՏՈՒՄ

Ռուսաստանում մասնակի զորակոչման ընթացքում, Իրկուտսկի մարզի զինկոմիսարիատում, 25-ամյա զորակոչիկը զնդակահարել է զինկոմիսարին եւ սոցցանցերում տարածել տեսահաղորդագրություն: Հարձակվողին ձերբակալել են, պարզվել է, որ նա Ռուսլան Զինինն է: Տարվում է հետաքննություն:

ԻՐԱՆ ԱՆՑ ԵՆ ԿԱՑՎՈՒՄ ԲՈՂՈՔԻ ԶԱՆԳԱԾԱՅԻՆ ՑՈՒՅՑԵՐ

Անցյալ շաբաթից Իրանի գրեթե 40 քաղաքներում միաժամանակ անցկացվեցին կանանց իրավունքների պաշտպանության բողոքի ցույցեր: Ոստիկանության եւ ցուցարարների միջեւ կայացած ընդհարմանը գողվել է շուրջ 35, ձերբակալվել՝ 1200 մարդ:

Նշենք, որ սեպտեմբերի 25-ին, Թբիլիսիում, խորհրդարանի առջեւ տեղի ունեցավ հանրահավաք՝ ի պաշտպանություն Իրանում անցկացվող ցույցերի մասնակիցների:

ԻՏԱԼԻԱ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՂԹՅԻՆ ԱՋ ԿԵՆՏՐՈՆԱՄԵՏՆԵՐԸ

Աջ կենտրոնամետ կոալիցիան՝ «Իտալիայի եղբայրներ», «Լիգա» եւ «Հառաջ, Իտալիա» կուսակցությունների կազմով, Սենատի (խորհրդարանի վերին պալատի) ընտրությունների արդյունքներով հավաքել է 44,53 տոկոս: Ինչ վերաբերում է Պատգամավորների պալատին, ապա աջ կենտրոնամետները հավաքել են 44,34 տոկոս:

Ըստ որում, հաղթած կոալիցիայում առաջատար ուժը՝ «Իտալիայի եղբայրներ» կուսակցությունն է (26,39 տոկոս՝ Սենատում, 26,44 տոկոս՝ Պատգամավորների պալատում): Կուսակցության առաջնորդ Ջորջա Մելոնին, ամենայն հավանականությամբ, կառաջադրվի կառավարության ղեկավարի պաշտոնին:

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

ԴԱՏԱԽԱՋՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ 27-ՐԴ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

«EUROJUST»-ՈՒՄ ՎՐԱՍԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉ, ԴԱՏԱԽԱՋ, 45-ԱՄՅԱ ԳԻՈՐԳԻ ԳՈՐԾԱԿԱՆ ԴԱՏԱԽԱՋՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՓՈԽՆԱՄԱՍԿԱԶ



Սեպտեմբերի 12-29-ին, Թբիլիսիում անցկացվեց Դատախազների միջազգային ասոցիացիայի (IAP) 27-րդ տարեկան «Գլոբալ իրադարձություններ, որոնք փոխել են քրեական արդարադատության համակարգերը» համաժողովը:

Համաժողովը բացեցին Վրաստանի վարչապետ Վրաստանի վարչապետ Իրախազ Մախարաձեի և Դատախազների միջազգային ասոցիացիայի նախագահ Չեոլ Կյու Վանգը:

Համաժողովը քննարկեց կազմակերպչական հարցեր: «EUROJUST»-ում Վրաստանի ներկայացուցիչ, դատախազ 45-ամյա Գիորգի Գոգաձեն ընտրվեց Դատախազների միջազգային ասոցիացիայի փոխնախագահ:

Ռեզիլիսիում ամենամյա համաժողովն առաջին անգամ անցկացվեց երկրի եւ Վրաստանի դատախազության պատմության մեջ: Դատախազների միջազգային ասոցիացիան (IAP) հիմնադրվել է 1995 թվականին, եւ նրան անդամակցում են 177 երկրների 183 դատախազական մարմիններ:

Իր խոսքում, Վրաստանի վարչապետ Իրախազ Մախարաձեի և Դատախազների միջազգային ասոցիացիայի նախագահ Չեոլ Կյու Վանգը:

Քառօրյա համաժողովին մասնակցեցին 60 երկրների 300 դատախազներ եւ ՄԱԿ-ի, Եվրամիության, Եվրոպայի խորհրդի:

ՆԱԽԱԳԻԾ

ՄԻՏԵԼ ՍԱՐՉՎԵԼԱՋԵՆ ՀԱՆԴԻՊԵՅ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Սեպտեմբերի 27-ին, Վրաստանի խորհրդարանի Մարդու իրավունքների պաշտպանության եւ քաղաքացիական ինտեգրման կոմիտեի նախագահ Միխեիլ Սարգվելաձեն, «Մասնակցային քաղաքականություն եւ փոքրամասնություններ» նախագծի շրջանակներում, հանդիպում ունեցավ ազգային փոքրամասնությունները ներկայացնող ուսանողների հետ:




Հանդիպմանը քննարկվեցին երկրում ընթացող գործընթացները եւ խոսեցին Վրաստանի ազգային բազմազանության կարեւորության մասին:

Պիպոլմենը առավել կարեւոր են, երբ մասնակիցները էք-նիկ փոքրամասնություններով խիտ բնակեցված շրջաններից են: Այս երիտասարդների հետ զրույցները, քննարկումները, ամիջա-կան փոխգործակցության հնարավորինս շատ ձեւերի հնարավորություններ ստեղծելը շատ կարեւոր է: Հետաքրքիր էր ծա-

նոթանալ այդ տարածաշրջանների ներկայացուցիչների տեսլականներին երկրի արդի խնդիրների վերաբերյալ,- հանդիպմանը հայտարարեց Միխեիլ Սարգվելաձեն:

ՄԱՔՍԱՅԻՆ

ՎՐԱՍԱՆԻ ԲՈՒՐ ՄԱՔՍԱԿԵՏԵՐԸ ԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՀԱՏՈՎ ԴԱՅՄԱՆԱԿԱՐԳՈՎ



Ինչպես տեղեկացրել է Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությունը՝ Վրաստանում գտնվող բոլոր մաքսակետերն անցել են աշխատանքի հատուկ պայմանակարգի:

Տեղեկության համաձայն, հատուկ ռեժիմի անցնելու պատճառը երթևեկության ավելացումն է:

տարածքում անցակետերում ավելացվել է նաեւ մաքսավորների թիվը՝ մաքսային հսկողության ընթացակարգերը 24 ժամ անխափան իրականացնելու համար:

Ըստ Վրաստանի եկամուտների ծառայության հաղորդագրության վրաց-ռուսական Վե-րին Լարսի մաքսակետով Վրաստանից Ռուսաստանի Դաշնություն մեկնող բեռնատարների մաքսային հսկողության ընթացակարգերը մասամբ հետաձգվում են:

տերի համատեղ կառավարման շրջանակներում, Եկամուտների ծառայությունը ինտեգրվել է կապի մեջ է հարեւան երկրների՝ Թուրքիայի, Ադրբեյջանի եւ Հայաստանի համապատասխան մաքսային մարմինների հետ, որպեսզի արագ գտնվեն այլընտրանքային մաքսային անցակետեր՝ նպատակակետ երկրներ հասնելու համար»,- նշված է հաղորդագրության մեջ:

ՍԱՐՄԱՆ

ՈՒՍԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ՄՈՒՏԵՐ ԿՐԱՍԱՆ ԱՎԵԼԱՅԵԼ Է, ԵՆԸՆՆՎԱԶԵԼ

Վրաստանի ներքին գործերի նախարարությունը, հաշվի առնելով հանրային մեծ հետաքրքրությունը, հրապարակել է տեղեկատվություն՝ վրաց-ռուսական սահմանին Ռուսաստանից Վրաստան մուտք գործող անձանց թվի, մուտքը ներծեւու չափորոշիչի, թվի, հիմքերի ու կանոնների մասին:

ցակետում մշտապես գտնվում է պետական պահպանության ծառայության համապատասխան ստորաբաժանումը՝ անվտանգությունն ապահովելու եւ ռիսկերը բացահայտելու նպատակով»,- նշված է հաղորդագրության մեջ:

Եւ Վրաստանի ներքին գործերի նախարար Վախթանգ Գոմելաուրու հանդիպմանը, քննարկվել են երկրի առջեւ ծառայած մարտահրավերները, մասնավորապես, վրաց-ռուսական սահմանին ստեղծված իրավիճակը:



Գերատեսչության տեղեկատվությամբ, այս տարվա սեպտեմբերի 21-ից, Ռուսաստանում մասնակի գործադադար հայտարարելուց հետո, Վրաստանի եւ Ռուսաստանի սահմանին ավելացել է Ռուսաստանից ժամանողների թիվը: Մասնավորապես, սեպտեմբերի 17-ից 26-ը Վրաստան է մուտք գործել 78 հազար 742 ՌԴ քաղաքացի, սեպտեմբերի 17-ից 26-ը Վրաստանը լքել է 62 հազար 120 ՌԴ քաղաքացի:

«Ռուսաստանի Դաշնությունից ավելացած հոսքն արդյունավետ կառավարելու նպատակով՝ «Դարիալ» անցակետում լրացուցիչ տեղակայվում են ոստիկանական խմբեր ինչպես սահմանային ներգաղթի վերահսկման ընթացակարգեր իրականացնելու, այնպես էլ՝ կետին հարող տարածքում հասարակական կարգի ապահովման եւ օրենքի հնարավոր խախտումների կանխման համար:

«Վերջին շրջանում ավելացել է այն քաղաքացիների թիվը, որոնց թույլ չեն տալիս մուտք գործել Վրաստանի տարածք՝ օրենսդրությամբ նախատեսված պատճառներով: Ըստ այդմ, ավելի հաճախ

Նշենք, որ սեպտեմբերի 26-ին, Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլու եւ Վրաստանի ներքին գործերի նախարար Վախթանգ Գոմելաուրու հանդիպմանը, քննարկվել են երկրի առջեւ ծառայած մարտահրավերները, մասնավորապես, վրաց-ռուսական սահմանին ստեղծված իրավիճակը:

սին համապարփակ տեղեկատվություն ստանալը: - Իշխանությունները, սակայն, պետք է կիրառեն բոլոր մեխանիզմները, որպեսզի հասարակության մեջ այլևս չլինեն հարցադրումներ, եւ զգացվի, որ ռիսկերը հաշվի են առնվում եւ բոլոր լծակներն օգտագործվում են,- ասաց Սալոմե Զուրաբիշվիլին: ՄԻՄՆ ԿԻԼԱՅԵ

ՏԱՐԱԾԱՆԵՐԶԱՆ

**ԱՄԱԼՔԱԼԱՔԻՆ ԵՎ ԼԻՏՎԱԿԱՆ ԶԱՐԱՍԱՅԸ ԿՆՈՉԱԿՎԵՆ ՔՈՒՅՐ-ՔԱՂԱՔՆԵՐ**

Ամալքալաքի մունիցիպալիտետի սակրեբուլժյուն կայացավ հանդիպում Վրաստանում Լիտվայի դեսպանության դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարի տեղակալ Սաուլիուս Վալայնիսի, Լիտվայի Ջարասայ քաղաքի քաղաքապետ Նիկոլայ Գուսևի-ասի, բիզնես-սեկտորի ներկայացուցիչ Դենիս Շիկալովի եւ այլ ներկայացուցիչների հետ:



Հանդիպմանը մասնակցեցին Ամալքալաքի մունիցիպալիտետի քաղաքապետ Մելքոն Մակարյանը, սակրեբուլժյան նախագահ Նաիրի Իրիցյանը, պաշտոնատար այլ անձինք: Հանդիպման նպատակը Ամալքալաքի եւ Ջարասայ քաղաքները քույր-քաղաքներ հռչակելու, վերոհիշյալ քաղաքների միջեւ համագործակցության հուշագրի ստորագրման նախապատրաստումն էր:

Քիտադարձ այցելություն Ջարասայ քաղաք, նախանշվում է համագործակցություն՝ մշակույթի, կրթության, սպորտի, առողջապահության, զբոսաշրջության եւ այլ ոլորտներում:

Կողմերը փոխանակեցին իրենց քաղաքները բնութագրող հուշանվերներ: Հանդիպման ավարտին պատվիրակության անդամներն այցելեցին Ամալքալաքի Գավառագիտական թանգարան, Սպորտային համալիր, քաղաքի մի շարք տեսարժան վայրեր:

**ԱՄԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԵՋ ԵՆ**

Ամալքալաքի մունիցիպալիտետում տարբեր ուղղություններով ակտիվորեն իրականացվում են ենթակառուցային ծրագրեր:

Արդեն ավարտվել են նախկին, առաջին «գինվորական ավանի» տարածքում գտնվող մինի մարզադաշտի վերանորոգումն ու կարգավորումը: Նշված «գինվորական ավանի» տեղում բնակչությունը խիտ է բնակեցված, եւ այս

մարզադաշտը երիտասարդների սպորտային գործունեության ու ժամանցի համար, կարելու վայր է: Առողջ ապրելակերպի ակտուալացումը մունիցիպալիտետի համար կարելու առաջնահերթություն է:

**Էջը պատրաստեց ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆԸ**

**ԱՆՑԿԱՑՎԵՑ «ՊՈՆԶԻԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՆԸ՝ «ՇՈԹԱՌԲԱ-2022»-Ը**

Ասպինձայի մունիցիպալիտետի Ռուսթավի գյուղում անցկացվեց «Պոնզիայի ժողովրդական տոնը» ավանդական «Շոթառբան»:



Միջոցառմանը մասնակցեցին Վրաստանի խորհրդարանի Ախալցխեի, Աղիզեների, Բորժոմի եւ Ասպինձայի մեծամասնական պատգամավոր Անտոն Օբոլաշվիլին, խորհրդարանի պատգամավոր Սանվել Մանուկյանը, Սանջիւն-Ջավախեթի տարածաշրջանում պետական լիազոր-նահանգապետ Բեսիկ Ամիրանաշվիլին, Ասպինձայի մունիցիպալիտետի քաղաքապետ Ռոստոմ Մագրաբվելիձեն, Ախալցխեի եւ Տաու-Կլարջեթի միտրոպոլիտ, սրբազան Թեոդոր, պաշտոնական այլ անձինք:

Վի գյուղում Շոթա Ռուսթավելու հուշարձանին: «Պոնզիայի ժողովրդական տոնին» անցկացվեցին գրական, մարզական մրցույթներ: Հաղթողները պարգևատրվեցին «Ընձենավոր» գրքով:

**ԱՐԵՎԵԼԷ-ԱՐԵՎՄՈՒՏԷ ՄԱՅՐՈՒՂՈՒՄ ԾԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՎԱՐՏՎԻ 2023 ԹՎԱԿԱՆԻՆ**

Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցումների նախարարության ճանապարհային դեպարտամենտի տեղեկատվության համաձայն, ներկայումս շինարարական աշխատանքներ են իրականացվում Ռիկոթի անցուղու բոլոր 51 թունելներում, որոնք բաժանված են 4 հատվածի:



Հատկանշական է, որ այս ճանապարհահատվածը մաս է կազմում Արեւելք-Արեւմուտք E60 արագընթաց մայրուղու: 51 թունելից արդեն 34 թունել է հատվել, որից 3-ը շահագործման է հանձնվել:

Եւ մինչեւ 51,6 կմ ընդհանուր երկարությամբ 4 գոտի արագընթաց մայրուղի, որը ներառում է 97 կամուրջ եւ 51 թունել:

Ի նկատի լեռնանցքի կառուցումը դարի նախագիծն է, որն ավարտվում է ամենաբարդ աշխարհագրական երթուղու վրա՝ ամենադժվար ինժեներական շինություններով: Այս ծրագրի արդյունքում կմիանան Արեւելյան եւ Արեւմտյան Վրաստանում արդեն կառուցված արագընթաց մայրուղու հատվածները, իսկ Ռիկոթի հատվածում շարժման արագությունը, որը ներկայումս

կազմում է 60 կմ/ժ, որոշ հատվածներում կավելանա եւ գրեթե կկրկնապատկվի, իսկ նոր ճանապարհը կհամապատասխանի ճանապարհային անվտանգության բոլոր ժամանակակից չափանիշներին»,- նշված է տեղեկատվության մեջ:

Ի դեպ, Ռիկոթի լեռնանցքի շինարարական աշխատանքները, որոնց ընդհանուր արժեքը կազմում է մինչեւ 2,6 մլրդ լարի, աստիճանաբար կավարտվեն մինչեւ 2023 թվականի ավարտը:

**ՀՈԿՏԵՓՅԱՆԱԿԱՆ ՊՈՆԶԻԱՅԻ ՕՐԸ ՀԵՇՏԻԱՅՈՒՄ**

Վիկտոր Հովսեփյանի տուն-թանգարան այցելությունից հետո Վրաստանի գրողների միության նախագահ Մաղվալա Գոնաշվիլին այսպիսի գրառում է արել. «Տիրոջ շնորհը թե չլինի, քնարերգությունը հանգավորված բառերի շարք է, ուրիշ ոչինչ: Տերն առատորեն շնորհել է Վիկտոր Հովսեփյան անզուգական բանաստեղծին: Այդ է պատճառը, որ Հեշտիայում նրա արձանը քար չէ, հավերժության խորհրդանիշ է դարձել»:

Այդ խորհրդանիշն է, որ, բանաստեղծի մահից հետո, այս էլ 26-րդ տարին Հեշտիայում է համախմբում Վիկտոր Հովսեփյանի պոեզիայի երկրպագուներին: Մեպտեմբերի 25-ին, Նինոծմինդայի մունիցիպալիտետի Հեշտիա գյուղում Նշվեց Հովսեփյանական պոեզիայի օրը: 1997 թվականից ի վեր, զեղեցիկ այս առիթը Հեշտիա է բերում շրջանի ղեկավարներին, բանաստեղծի ընկերներին, բարեկամներին, հյուրերի՝ Թբիլիսիից, Երևանից: Ավանդական օրակարգով տոնախմբության մասնակիցներին իր օրհնությունը բերեց գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ Արժանապատիվ Տեր Անտոն քահանա Անտոնյանը: Այնուհետև ներկաներն այցելեցին բանաստեղծի տուն-թանգարան: Բանաստեղծի դուստրը՝ Վիրահայոց թեմի Թբիլիսիի «Հովհաննես Թումանյանի տուն» գիտամշակութային կենտրոնի տնօրեն Գիսանե Հովսեփյանը, պատմեց Վիկտոր Հովսեփյանի գրական ժառանգության, անտիպի տպագրման աշխատանքների, վերջին շրջանում տպագրված գրքերի, նոր թարգմանությունների, բանաստեղծի ստեղծագործությանն ուղղված գրականագիտական ուսումնասիրությունների մասին: Սրահներից մեկում հյուրերի ուշադրությանն էին ներկայացվել բանաստեղծի գրական ժառանգության մասունքները. նկարների բնօրինակներ, գրաֆիկական աշխատանքներ, Վիկտոր Հովսեփյանի նամակները՝ իր ընկերներին եւ նրանց նամակները՝ Վիկտորին, ներկայացվել էր Հովսեփյան տոհմի հիմնադիր Հովակիմի՝ Հովսեփի ձեռագիր ծաղկուններով Նարեկ-մատյանը, բանաստեղծ, թարգմանիչ Անահիտ Բոստանջյանի տողացիները, նամակներ...

նաստեղծի տառի՝ Խազոյի աղոթագիրքը: Բաժիններից մեկում ներկայացվել էին վրաց դասական Տերենտի Գրանելու բանաստեղծությունների հայերեն Հովսեփյանական թարգմանության նկարագրող ներով բնագրերը, թբիլիսցի թարգմանիչ Գիվի Շահնագարի Գրանելու հայերեն գրքի առաջնորդող խոսքը, բանաստեղծի ստեղծագործությանն ուղղված գրականագիտական ուսումնասիրությունների մասին: Այստեղ էլ անտիպի տպագրման աշխատանքների, վերջին շրջանում տպագրված գրքերի, նոր թարգմանությունների, բանաստեղծի ստեղծագործությանն ուղղված գրականագիտական ուսումնասիրությունների մասին: Սրահներից մեկում հյուրերի ուշադրությանն էին ներկայացվել բանաստեղծի գրական ժառանգության մասունքները. նկարների բնօրինակներ, գրաֆիկական աշխատանքներ, Վիկտոր Հովսեփյանի նամակները՝ իր ընկերներին եւ նրանց նամակները՝ Վիկտորին, ներկայացվել էր Հովսեփյան տոհմի հիմնադիր Հովակիմի՝ Հովսեփի ձեռագիր ծաղկուններով Նարեկ-մատյանը, բանաստեղծ, թարգմանիչ Անահիտ Բոստանջյանի տողացիները, նամակներ...



Թանգարանից հետո՝ ներկաներն այցելեցին Հովսեփյանների տոհմական Եռակնյայի Սուրբ Գեորգ սրբավայր, ծաղիկներ խոնարհեցին իր նախնիների կողքին հանգչող Վիկտոր Հովսեփյանի շիրմին: Հանդիսույթը շա-



րունակվեց գյուղի Վիկտոր Հովսեփյանի անվան թիվ 1 հանրային դպրոցում: Օրվա առիթով Հեշտիայում էին Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Սմբատ Կյուրեղյանը, Նինոծմինդայի քաղաքապետ Անի Մոսոյանը, սակրեբուլժյան նախագահ Վահան Արոյանը, փոխքաղաքապետ Արմեն Բոդյանը, Հեշտիայի տարածքային միավորում քաղաքապետի ներկայացուցիչ Եգոր Բոթյանը, հյուրեր՝ Թբիլիսիից, Երևանից: Համերգային ծրագրով հանդես եկան Նինոծմինդայի մշակույթի տան երգի եւ պարի, «Հեշտիա» պարի համույթները: Իր անզուգական մվերը՝ հայ երգարվեստի գոհարներ, ներկաներին մատուցեց Հեշտիայի տաղանդավոր գավակ, այժմ երեւանաբնակ երգիչ Արմեն Սկոյանը: